DRAFT COPY: OBJECTIVES OF WAN-C

Posted on October 1, 2010 by Keghart

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ 3-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատմաքաղաքական հիմնավորում

19-րդ դարի վերջի և 1914-1923 թթ. Հայկական ցեղասպանությունների հետևանքով արևմտահայությունը բնաջնջվեց, հայրենազրկվեց, ձևավորվեց հայկական Սփյուռքը:

Շուրջ մեկ դար Հայ Առաքելական եկեղեցին, ավանդական կուսակցությունները, բարեգործական և նպաստամատույց հասարակական ու համազգային կազմակերպությունները գլխավորեցին և հնարավորինս իրականացրին հայապահպան շնորհակալ գործը, ~~ակտիվ պահեցին Հայկական հարցը, մեծապես~~ նպաստեցին Հայկական Մեծ եղեռնի միջազգային ճանաչման գործընթացին:

Համաշխարհային հայությունն այսօր հայտնվել է մի իրողության առջև, երբ 20-ամյա պայքարից ու վայրիվերումներից հետո այլևս անքույլատրելի է դեպքերի ետևից գնալ, անհրաժեշտ են համահայկական ծրագրեր, կուռ եռամիասնության՝ Հայաստան - Սփյուռք - Արցախ համագործակցության դրսևորումներ:

Հայությունն այսօր համընդհանուր լարումի, սպասումի յուրահատուկ անցումային փուլ է ապրում: Հայ ժողովրդի պատմականորեն ձևավորված երկու հատվածների՝ արևմտահայության և արևելահայության պարտադրված երկատված գոյությունն այսօր կարող է դրական առաջընթաց ապահովել, եթե հայության՝ անգամ ցրվածության գործոնը մի նպատակի ուղղվի:

Այն եզակի ժողովուրդներից ենք, որ 3-րդ հազարամյակ ենք մտել համազգային հաղթանակով՝ պետականության վերականգնում և տարածքային ազատագրում: Այս մեծ նվաճումը շարունակություն է պահանջում: Հայության համար կա մեկ գերխնդիր իդեալ՝ ժողովուրդների ու պետությունների մեծ ընտանիքում հանդես գալ ներդաշնակ և միասնաբար, որպես հավաքական ուժ և դա հասցնել այնպիսի մակարդակի, որպիսի համաշխարհային հայությունը ճանաչվի ոչ միայն ի դեմս Հայաստանի Հանրապետության, այլ նաև արտերկրյա հզորագույն համազգային կառույցի գործունեությամբ:

Հայության 2/3-ը ապրում է ոչ իր պատմական հայրենիքում, այդ հզորագույն ներուժը, սակայն, պատշաճ կերպով կազմակերպված չէ անկազմակերպ է, գործում է անհատների և, հիմնականում, համահայկական հնչեղություն, նշանակություն և իրավասություն չունեցող կազմակերպությունների միջոցով: Դրանք թեև կատարել ու

Category: Opinions